## *1.2 Արտադրություն (ծառայություններ)*

### *1.2.1. Արդյունաբերություն*

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:* 2005թ. հունվար-մայիսին հանրապետությունում, ըստ 2076 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 246032.8 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 243319.2 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում` 25380.5 մլն. դրամի, այլ երկրներում` 64879.0 մլն. դրամի արտադրանք:

2004թ. հունվար-մայիսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 104.5%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման` 103.3%:

**Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2003թ. դեկտեմբերի նկատմամբ**




**Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան***

*(%)*

| | Նախորդ ամսվա նկատմամբ✧ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ✧ |
|---|---|---|---|
| 2004 թ. | | | |
| հունվար | 85.5 | 91.1 | 85.5 |
| փետրվար | 95.5 | 98.1 | 81.7 |
| մարտ | 118.6 | 111.3 | 96.9 |
| ապրիլ | 106.5 | 119.3 | 103.2 |
| մայիս | 86.9 | 91.2 | 89.7 |
| հունիս | 111.7 | 106.0 | 100.2 |
| հուլիս | 95.0 | 98.4 | 95.2 |
| օգոստոս | 98.8 | 98.6 | 94.1 |
| սեպտեմբեր | 106.3 | 92.4 | 100.0 |
| հոկտեմբեր | 103.5 | 97.9 | 103.5 |
| նոյեմբեր | 94.2 | 100.9 | 97.5 |
| դեկտեմբեր | 103.0 | 106.9 | 100.4 |

* *Սկսած 2005թ. մայիսից արդյունաբերական արտադրանքի հաշվետու ամսվա աճի տեմպը նախորդ ամսվա նկատմամբ, հաշվարկված է ներառելով պատվիրատուի հումքի արժեքը:*

| | Նախորդ ամսվա նկատմամբ✧ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ✧ |
|---|---|---|---|
| 2005 թ. | | | |
| հունվար | 81.7 | 100.7 | 81.7 |
| փետրվար | 113.2 | 110.1 | 92.5 |
| մարտ | 111.6 | 103.7 | 103.2 |
| ապրիլ | 96.7 | 96.3 | 99.8 |
| մայիս | 103.2 | 110.9 | 103.0 |

## Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների[1]

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով[2], *մլն. դրամ* | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով[2], *մլն. դրամ* | 2005թ. հունվար-մայիսին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2004թ. հունվար–մայիսի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|
| **Ամբողջ արդյունաբերությունը** | 246032.8 | 243319.2 | 104.5 |
| *այդ թվում՝* | | | |
| *էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում* | 46363.0 | 46363.0 | 111.7 |
| *դրանից՝* | | | |
| էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում | 43007.9 | 43007.9 | 112.5 |
| *որից՝* | | | |
| էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում | 36005.0 | 36005.0 | 106.6 |
| գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում | 7002.9 | 7002.9 | 157.8 |
| ջրի հավաքում, մաքրում և բաշխում | 3355.1 | 3355.1 | 101.5 |
| *հանքագործական արդյունաբերություն* | 47397.3 | 42758.2 | 96.4 |
| *որից՝* | | | |
| մետաղե հանքաքարերի արդյունահանում | 46547.8 | 41941.2 | 96.1 |
| հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր | 849.5 | 817.0 | 111.4 |
| *մշակող արդյունաբերություն* | 152272.5 | 154198.0 | 105.1 |
| *որից՝* | | | |
| սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն | 63176.0 | 67410.8 | 97.2 |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | 6027.0 | 6181.9 | 121.5 |
| մանածագործական արտադրություն | 941.8 | 980.9 | 107.1 |
| հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում | 670.0 | 541.4 | 65.2 |
| կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն | 94.5 | 97.3 | 88.7 |
| բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն | 409.1 | 422.8 | 91.5 |
| հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում | 2428.4 | 2344.8 | 101.9 |
| քիմիական արդյունաբերություն | 6106.8 | 2740.8 | 104.1 |
| ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն | 1078.2 | 1045.6 | 123.8 |
| այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 6435.9 | 6324.2 | 110.4 |
| | Արտադրանքի | Պատրաստի | 2005թ. հունվար-մայիսին, |

[1] *Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):*
[2] *Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*

| | (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով[1], *մլն. դրամ* | արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով[1], *մլն. դրամ* | արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2004թ. հունվար–մայիսի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|
| մետաղագործական արդյունաբերություն | 50323.0 | 51629.8 | 144.8 |
| պատրաստի մետաղե արտադրատե-սակների արտադրություն | 1583.1 | 1614.5 | 114.9 |
| մեքենաների և սարքավորանքի արտադրություն | 2228.7 | 2282.2 | 122.5 |
| ոսկերչական արտադրատեսակների արտադրություն | 6382.0 | 5753.1 | 91.3 |
| գործունեության այլ տեսակներ | 4388.0 | 4827.9 | 84.8 |

**Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2005թ. հունվար-մայիսին**




**Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում**




**Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում**

[1] *Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*




- ■ էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն
1. հիդրոէլեկտրակայաններում
2. ջերմաէլեկտրակայաններում
3. ատոմային էլեկտրակայանում
- ■ էլեկտրաէներգիայի հաղորդում և բաշխում էլեկտրացանցերի կողմից

## Հանքագործական արդյունաբերություն




- ■ մետաղե հանքաքարերի արդյունահանում
- ■ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

Մշակող արդյունաբերություն




2005թ. հունվար-մայիսին արտադրված (հաշվառվող) 113 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 56-ի գծով ծեռք է բերվել կամ գերազանցվել 2004թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի՝ 61-ից 27-ի և սպառողական ապրանքների՝ 52-ից 29-ի գծով:

## Սպառողական ապրանքների արտադրության ծավալները[1]

*(մլն. դրամ)*

| | Փաստացի թողարկումը հունվար-մայիսին | | Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % |
|---|---|---|---|
| | 2005թ. | 2004թ.[2] | |
| Սպառողական ապրանքներ, ընդամենը | 79262.5 | 83024.8 | 95.5 |
| *այդ թվում`* | | | |
| պարենային ապրանքներ | 46549.4 | 47519.7 | 98.0 |
| ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը) | 14888.9 | 15601.7 | 95.4 |
| ոչ պարենային ապրանքներ, ընդամենը | 17824.2 | 19903.4 | 89.6 |
| *այդ թվում`* | | | |
| թեթև արդյունաբերության[3] | 4175.0 | 5454.1 | 76.5 |
| մշակութակենցաղային և տնտեսական նշանակության | 13649.2 | 14449.3 | 94.5 |

## *Սննդամթերք,ներառյալ խմիչքներ և ծխախոտ* արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները[4]

| | 2005թ. հունվար-մայիս | 2004թ. հունվար-մայիս | 2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Միս[5], տոննա | 14714.5 | 14376.9 | 102.3 |
| Մսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա | 496.6 | 378.1 | 131.3 |
| Պանիր[5], տոննա | 1888.2 | 1874.9 | 100.7 |
| Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)[5], տոննա | 129469 | 117793 | 109.9 |
| Պաղպաղակ, տոննա | 528.8 | 505.1 | 104.7 |
| Պահածո, տոննա | 1086.3 | 106.2 | 10.2 անգամ |
| Ալյուր, տոննա | 58123 | 60849 | 95.5 |
| Ձավարեղեն, տոննա | 453.0 | - | - |
| Հաց և հացամթերք, հազ. տոննա | 122.8 | 122.8 | 100.0 |
| Հրուշակեղեն, տոննա | 1728.3 | 1489.2 | 116.1 |
| Մակարոնեղեն, տոննա | 1102.5 | 884.6 | 124.6 |
| Շաքարավազ, տոննա | 788.0 | - | - |
| Բուսական յուղ, տոննա | 73.6 | 255.4 | 28.8 |
| Օղի և օղու-լիկյորի արտադրանք , հազ. լիտր | 4890.3 | 3925.5 | 124.6 |
| Կոնյակ, հազ. լիտր | 2955.9 | 2741.4 | 107.8 |
| Գինի, հազ. լիտր | 812.0 | 979.4 | 82.9 |
| Շամպայն գինի, հազ.լիտր | 103.1 | 110.6 | 93.2 |
| Գարեջուր, հազ. լիտր | 3179.1 | 2537.8 | 125.3 |
| Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր | 8937.4 | 11423.0 | 78.2 |
| Բնական հյութեր, հազ.լիտր | 1634.4 | 1838.4 | 88.9 |
| Հանքային ջրեր, հազ. լիտր | 8663.5 | 7326.3 | 118.3 |
| Աղ, տոննա | 12859.5 | 11185.6 | 115.0 |
| Սիգարետներ, մլն.հատ | 1054.0 | 913.9 | 115.3 |
| Ֆերմենտացված ծխախոտ, տոննա | 267.4 | 484.4 | 55.2 |

*[1] Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*
*[2] 2004թ սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2005թ.գներով:*
*[3] Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*
*[4] Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր` 1210-202):*
*[5] Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը): Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

*Մանածագործական և կարի* արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2005թ. հունվար-մայիս | 2004թ. հունվար-մայիս | 2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Բամբակյա գործվածքներ, հազ. $մ^2$ | 76.8 | 57.2 | 134.3 |
| Գորգեր և գորգեղեն, $մ^2$ | 11791 | 11917 | 98.9 |
| Գուլպեղեն, հազ. զույգ | 126.0 | 125.3 | 100.6 |
| Տրիկոտաժեղեն, հազ. հատ | 780.8 | 707.3 | 110.4 |
| Կարի արտադրանք[1], մլն. դրամ | 2640.3 | 4153.9 | 63.6 |

2005թ. հունվար-մայիսին *քիմիական* արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 61.8%-ով, լվացող, մաքրող և օսլայող միջոցներինը՝ 48.0%-ով, քիմիկադեղագործական արտադրանքինը՝ 31.6%-ով, սինթետիկ կաուչուկինը՝ 3.3%-ով, կաուստիկ սոդայինը՝ 1.5%-ով, իսկ լաքաներկանյութերի արտադրությունը նվազել է 8.0%-ով:

*Ոչ մետաղական հանքային* արտադրատեսակների արտադրությամբ և *հանքարդյունահանմամբ* զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2005թ. հունվար-մայիս | 2004թ. հունվար-մայիս | 2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, $մ^3$ | 8369 | 8786 | 95.3 |
| Ապրանքային բետոն, $մ^3$ | 19332 | 19172 | 100.8 |
| Երեսպատման սալեր բնական քարից, $մ^2$ | 54482 | 46968 | 116.0 |
| Ոչ հանքային շինանյութեր, $մ^3$ | 126083 | 124829 | 101.0 |
| Կիր, տոննա | 3300 | 143 | 23.1 անգամ |
| Ցեմենտ, հազ. տոննա | 178.3 | 153.5 | 116.2 |
| Գաջ, տոննա | 13430 | 16468 | 81.6 |
| Ուղիղ կտրվածքի տուֆ, $մ^3$ | 14248 | 16853 | 84.5 |
| Ծակոտկեն լցանյութեր, $մ^3$ | 36664 | 36586 | 100.2 |
| Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, $մ^2$ | 13582 | 20543 | 66.1 |

*Մետաղագործական* արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ցինկի խտանյութի արտադրությունն ավելացել է 2.1 անգամ, կոնվերտորային (սև) պղնձինը՝ 70.1%-ով, իսկ պղնձի խտանյութում պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 5.6 և 9.0%-ով:

[1] *Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

*Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի* արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2005թ. հունվար-մայիս | 2004թ. հունվար-մայիս | 2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Մետաղահատ հաստոցներ, հատ | 2 | 138 | 1.4 |
| Ռելեներ, հատ | 126914 | 154255 | 82.3 |
| Ուժային ճկուն կաբելներ, կմ | 1.6 | 1.9 | 84.2 |
| Տեղակայման հաղորդալարեր, կմ | 52.8 | 61.8 | 85.4 |
| Էմալապատ լարեր և փաթութալարեր, տոննա | 31.9 | 11.9 | 2.7 անգամ |
| Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ | 4360 | 4320 | 100.9 |
| Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ | 923.2 | - | - |
| Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ | 671 | 2725 | 24.6 |
| Ուժային տրանսֆորմատորներ, հատ | 3 | 125 | 2.4 |
| 63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ | 27 | 195 | 13.8 |
| 0.5-100 կՎտ հզորության փոփոխական հոսանքի գեներատորներ, հատ | 1 | 20 | 5.0 |
| Համակարգիչներ, հատ | 949 | 801 | 118.5 |
| Ջրային հաշվիչներ, հատ | 69 | 239 | 28.9 |
| Էլեկտրական հաշվիչներ, հատ | 336 | 2344 | 14.3 |
| Սառնարանային ցուցափեղկեր, հատ | 111 | 52 | 2.1 անգամ |
| Պոմպեր, հատ | 143 | 248 | 57.7 |

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվար-մայիսին հանրապետությունում թողարկվել է 2904.6 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 106.9%-ը: Ընդ որում, ՀԱԷԿ-ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 12.7% -ով, ՋԷԿ-երում՝35.7% -ով, իսկ ՀԷԿ-երում՝ նվազել է 20.6% -ով:

2005թ. հունվար-մայիսին ՀԱԷԿ-ը թողարկել է 1318.0 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 45.3% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 861.9 մլն. կՎտ ժամ և 29.7%-ը, ՀԷԿ-երը՝724.7 մլն. կՎտ ժամ և 25.0%-ը: 2005թ. հունվար-մայիսին հանրապետությունում թողարկվել է 178.7 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 67.8%: